

Ս ¹¹
538

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՃԱՂԱՐՅԱՆ ԷԴԳՈՐ ԱՇՈՏԻ

ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.02-«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության բեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Սուրեն Այվազի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Գևուշ Վահանի Բաղդասարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Արթուր Սերգեյի Ծամցյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 26 -ին ժամը 15³⁰-ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, Երևան, Մ.Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 25-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



11-538
Handwritten signature

Ա. Լ. Ասլանյան

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության բեմայի արդիականությունը: Պարենային անվտանգությունը երկրի ազգային անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն է, որն ունի ռազմավարական կարևոր նշանակություն: Այդ տեսանկյունից պարենամթերքի արտադրություն-վերանշակում-սպառում համակարգում կարևոր դեր ունի ազգաբնակչության անվտանգության ապահովումը և համապատասխան ծառայությունների իրականացումը, որոնք կնպաստեն պարենային անվտանգության հիմնահարցերի լուծմանը:

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացումը զգալիորեն սահմանափակվում է հետստեփականաշնորհման ժամանակահատվածում ձևավորված բազմաազար գյուղացիական տնտեսությունների փոքր չափերով և հողաբաժինների մասնատվածությամբ: Ոլորտը բնութագրվում է վարման բարձր ռիսկայնությամբ, հարաբերական սակավահողությամբ, արտադրական ենթակառուցվածքների թերզարգացածությամբ, ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ փոխառու միջոցների համալրման դժվարամատչելիությամբ, արտադրատեխնիկական և արտադրատեխնոլոգիական սպասարկման անբավարարությամբ, ինչպես նաև վարելահողերի ավելի քան 1/3 մասի ոչ նպատակային օգտագործման հանգամանքով:

Պարենային անվտանգության ապահովման համակարգում կարևոր նշանակություն ունի ագրոպարենային համակարգի զարգացումը: Պարենային անվտանգության ապահովման համատեքստում ագրոպարենային համակարգի հիմնական նպատակն է առկա բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման, ագրարային բարեփոխումների խորացման, տնտեսավարման ձևերի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և գյուղատնտեսության ոլորտում ենթակառուցվածքների գործունեության բարելավման արդյունքում ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ Հայաստանի Հանրապետության բնակչության կայուն պարենային ապահովման համար, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում:

Վերջին տարիներին իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել են պարենային անվտանգության մակարդակի բարձրացման որոշակի նախադրյալներ, սակայն բնակչության կայուն և լիարժեք պարենաապահովման հարցում դեռևս առկա են լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ, ինչը հնարավոր է իրագործել միայն այնպիսի պետական միասնական քաղաքականության իրականացման շնորհիվ, որը կերաշխավորի նրբունակ ագրոպարենային համակարգի կայացումը, տարածքային համաչափ զարգացումը, արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերի առաջացման կանխարգելումը, մակրոտնտեսական կայունությունը, բնակչությանը սննդամթերքով ապահովման լիարժեքությունը, սննդամթերքի ինքնաբավության

անհրաժեշտ մակարդակը, ինչպես նաև սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության իրականացումը:

Ճգնաժամային և հետճգնաժամային-վերականգնման ժամանակաշրջանում թերսնման ու սովի հետ կապված իրավիճակի վերլուծությունը վեր է հանել մի շարք աղքատ երկրների տնտեսական ցնցումներից անպաշտպանության խնդրի առաջնայնությունը: Տարածաշրջանային հակամարտությունների առկայության, հաղորդակցության ուղիների խոցելիության և տեղական արտադրության հաշվին սննդամթերքի ինքնաբավության ցածր մակարդակի պայմաններում պարենային անվտանգության հիմնախնդրի կարգավորման քաղաքականությունն ունի հստակեցման անհրաժեշտություն: Դրանով է բացատրվում պարենային ճգնաժամների և պարենի նորմավորված և հավասարաչափ տեղաբաշխման ապահովման խնդրի կարևորությունը: ԴՊ-ը, ունենալով սահմանակից չորս երկրներ, որոնցից երկուսի հետ պաշտոնապես տնտեսաքաղաքական հարաբերություններ չի իրականացնում ազգային անվտանգության նկատառումից ելնելով, հարկ ունի լուծել պարենային ապահովության, պարենի արդյունավետ տեղաբաշխման հիմնախնդիրները, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղղություններին, պարենային ապահովման զարգացման հայեցակարգային մոտեցումների առանձին հիմնահարցերի վերաբերյալ հետազոտություններ են կատարվել հայ տնտեսագետ գիտնականների կողմից: Սակայն դեռևս առկա են տեսամեթոդական հստակեցման և պարզաբանման կարիք ունեցող մի շարք խնդիրներ՝ կապված ճգնաժամային իրավիճակներում և պարենային պակասուրդի պայմաններում պարենի հավասարաչափ մատակարարման հետ: Դիտարկվող հիմնախնդիրների արդիականությունը, դրա գործնական նշանակությունը, պարենային ապահովման ոլորտում գործնական միջոցառումների և հանգուցավածումների ոչ բավարար ուսումնասիրությունը հիմք են հանդիսացել թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրության համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է մշակել առաջարկություններ ՀՀ պարենային անվտանգության ապահովման, պարենային անվտանգության և պարենային ընդհանուր պակասուրդի կառուցվածքի և մասշտաբների գնահատման, ազդարարային քաղաքականության կատարելագործման, ճգնաժամային իրավիճակներում պարենի անխափան մատակարարման բարելավման համար:

Առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսությունում կարևորվել է հետևյալ խնդիրների լուծումը.

- ուսումնասիրել ՀՀ պարենային անվտանգության ապահովման առանձնահատկությունները,
- գնահատել ՀՀ պարենային անվտանգության իրավիճակը ազգային անվտանգության ապահովման համատեքստում,

- կատարել ՀՀ պարենապահովման հետազոտի վերլուծություն՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և սպառման համատեքստում,
- հետազոտել ՀՀ պարենային անվտանգության ապահովման ռազմավարական տեսանկյունները,
- վերլուծել ՀՀ ազդարարային քաղաքականության առաջնահերթությունները երկրի պարենապահովման գործում,
- մշակել ազդարարային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները,
- վերլուծել ՀՀ պարենային հաշվեկշիռը՝ պարենային անվտանգության և պարենային ընդհանուր պակասուրդի կառուցվածքի և մասշտաբների գնահատման համար,
- վերհանել ճգնաժամային իրավիճակներում պարենային ապահովվածության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության պարենային ապահովման համակարգն է: Հետազոտության առարկան ՀՀ պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիների գնահատումն է:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության թեմայի ուսումնասիրության համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասականների, հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները, պետական կառավարման մարմինների և ՀՀ կառավարության կողմից մշակված հայեցակարգերը, պարենային ապահովման ոլորտին վերաբերող միջազգային կազմակերպությունների հաշվետվություններն ու գիտամեթոդական մշակումները:

Ատենախոսության տեղեկատվական հիմքերն են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության հաշվետվությունները, համապատասխան ինտերնետային կայքերի տեղեկատվական նյութերը և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներն ու սահմանված նորմատիվները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության, սինթեզի, խըմբավորման և համեմատությունների մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական և գործնական արդյունքներով, որոնցից էական նշանակություն ունեն և պաշտպանության առարկա են հանդիսանում հետևյալները.

- պարենային ծրագրերի մոնիթորինգի անցկացման համար տեղեկատվական հիմքերի ապահովման նպատակով հիմնավորվել է գյուղատնտեսության տեղեկատվական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, մասնավորապես գյուղատնտեսական վարչական ռեգիստրի համակարգի ներդրում, ազդարարային ոլորտին առնչվող շտեմարանների ստեղծում, տվյալների ամփոփում և վերլուծություն,

• առաջարկվել է ստեղծել պարենային անվտանգության դրամական ֆոնդեր, որոնց ռազմոնալ օգտագործումից ստացվող միջոցները կարող են ուղղվել կարճաժամկետ պարենային ծրագրերի իրագործմանը ու պարենային համալրմանը և թարմացմանը, որոնց ռազմոնալ օգտագործման համար առաջարկվում է զարգացնել պետություն-մասնավոր ոլորտ գործակցությունը,

• պարենային անվտանգության ոլորտում տարածաշրջանային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում "պարենային արագ արձագանքման ծրագրի" հիմնական դրույթները,

• պարենային քաղաքականության հասցեականությունը ապահովելու համար առաջարկվել է ներդնել/կիրառել համայնքային աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթիվ, որը հաշվարկվում է համայնքում եկամտ ստեղծելու հնարավորության, համայնքի խոցելիության և համայնքում բարեկեցիկ ապրելու հնարավորությունների սահմանափակության ցուցանիշների վրա,

• առաջարկվել են պարենային ճգնաժամի դեպքում միջամտության հաջորդականությունը ապահովող հայեցակարգի հետևյալ բաղադրիչներով՝ պարենային ճգնաժամների նախազուլաշցում, պարենային պահուստների, պարենային օգնության և պարենային անվտանգության ֆոնդերի ռազմոնալ օգտագործում:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հեռանկարային ու երկարաժամկետ կառուցակարգերի ներդրմամբ: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պարենային ապահովման ոլորտը համակարգող և կարգավորող մարմինների կողմից պարենային անվտանգության ոլորտում իրականացվող քաղաքականության շրջանակներում:

Հետազոտությունը կարող է նաև մեթոդական հիմք հանդիսանալ ԲՈՒՀ-երում համապատասխան դասընթացների դասավանդման ժամանակ:

Հետազոտության որոշ արդյունքներ կարող են օգտագործվել պարենային անվտանգության ոլորտի հիմնախնդիրներն ուսումնասիրող տնտեսագետների, ինչպես նաև այլ հետազոտողների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի 3 գիտական հոդվածներում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված զրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 141 էջի վրա, ներառում է 21 աղյուսակ, 12 գծապատկեր, 14 գծանկար:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի գիտական մոտայթն ու դրա գիտագործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Պարենային հիմնախնդրի սոցիալ-տնտեսական տեսանկյունները և պարենային անվտանգությունը», ներկայացվել են պարենային անվտանգության էությունը, դրա հիմնական առանձնահատկությունները, ուսումնասիրվել են պարենային անվտանգության սոցիալ-տնտեսական տեսանկյունները, քննարկվել են ՀՀ պարենային անվտանգության առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնասիրվել է գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների դերակատարությունը ՀՀ պարենային ապահովման համակարգում:

Համաշխարհային պարենային հիմնահարցը 21-րդ դարի չլուծված գերխնդիրներից է: ՄԱԿ-ի գլխավոր Ասամբլեայի 1974թ. համաշխարհային պարենային կոնֆերանսի հռչակագրում նշվում էր, որ ճգնաժամը առավել սուր է դրսևորվել զարգացող երկրներում, որտեղ աշխարհի բնակչության 82%-ի համար արտադրվում է համաշխարհային ամբողջական ՀՆԱ-ի 19% և գյուղատնտեսական ՀՆԱ-ի միայն 59%¹: Անցած երկու տասնամյակում համաշխարհային պարենային ապահովման ասպարեզում կան որոշակի ձեռքբերումներ, սակայն շատ հիմնահարցեր դեռևս մնում են չլուծված:

Մարդկությունը 21-րդ դար է թևակոխել ավելի լուրջ սպառնալիքներով: Եթե այսօր քաղցած է աշխարհի բնակչության 20% և թերսնվում է շուրջ 40%-ը, ապա 10 տարի հետո քաղցած բնակչությունը կկազմի բնակչության 1/4-ը²:

Աշխարհը թևակոխում է բնակչության մեկ շնչի հաշվով պարենամթերքի արտադրության և սպառման նվազման տևական շրջան: Աշխարհի բնակչության տարեկան 80-90 մլն աճը գերազանցում է պարենամթերքի աճի տեմպերին: Ռեսուրսների ներգրավման փոքրացող հնարավորությունները դժվարեցնում են պարենամթերքի պահանջարկի աճող ծավալների ապահովումը, որը 1950-1985թթ՝ 30 մլն և 1985-1995թթ՝ 125 մլն տոննա միջին տարեկան աճի դինամիկ³: 2010-2030թթ. միջին տարեկանը կկազմի ընդամենը 9 մլն տոննա³:


¹ Stu Максвелл С. и М.Смит (1992г.). Продовольственная безопасность домохозяйств: концептуальный обзор. С. Максвелл, Т. Р. Франкербергер и др. из публикации "Продовольственная безопасность домохозяйств: концепции, показатели, измерения: технический обзор. Нью-Йорк и Рим. ЮНИСЕФ и ИФАД.

² Stu ФАО Международная техническая конференция по сельскохозяйственной биотехнологии в развивающихся странах (ABDC-10), 1-4 марта 2010 г. Гвадалахар, Мексика.

³ Stu նույն տեղում:

«Պարենային անվտանգություն» հասկացության ժամանակակից մեկնաբանությունը ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ «բոլոր մարդկանց համար ժամանակի ցանկացած պահի տնտեսապես և ֆիզիկապես հասանելի է առողջության համար անվտանգ և բավարար քանակությամբ պարեն, որը բավարարում է նրանց սննդային պահանջները և անհրաժեշտ է ակտիվ և առողջ կյանք վարելու համար»⁴:

Երկրի պարենային ապահովվածության կարևորագույն ցուցանիշներն են բնակչության մեկ շնչի ապահովվածությունը սննդամթերքով, և սննդամթերքի սպառման մակարդակը: Առանձնացվում է սպառման երեք մակարդակ՝ 2500-3500 կկալ - բավարար, 1500-2500 կկալ - անբավարար և 1500 կկալ-ից ցածր, որի դեպքում կյանքի տևողությունը կրճատվում է երկու անգամ: Ընդ որում, օրական 2150 կկալ-ից ցածրը քաղցի շեմն է: Ըստ էության, դա պարենային նվազագույն զանբյուրն է:




Գծապատկեր 1
Սննդամթերքի սպառման մակարդակները


ՀՀ առողջապահության նախարարությունը էներգետիկ նվազագույն օրաբաժինը ներկայումս սահմանել է 2412 կկալ-ի չափով:

ՀՀ շուկա մուտք գործելու ժամանակակից փուլում պարենային անվտանգության հիմնախնդիրը առավել սուր և հակասական է դրսևորվում: Ինչպես աշխարհի շատ երկրներ, այնպես էլ Հայաստանը անմասն չի մնում երկրում պարենային չլուծված հիմնախնդիրներից, որոնց լուծումը հանդիսանում է երկրի առաջնային խնդիրներից մեկը: Հիմնվելով սովի տարածվածության վերաբերյալ առկա 2010-2012թթ. տվյալների վրա՝ Հայաստանը թերսնվող բնակչության 21% ցուցանիշով դասվել է սովի տարածվածության միջին-բարձր մակարդակ ունեցող երկրների թվին (ՊԳԿ):

⁴ Տե՛ս Committee on World Food Security (CFS) 2005, *Assessment of the World Food Security Situation*, Rome



Գծապատկեր 2
ՊԳԿ սովի տարածվածության սանդղակ (ըստ թերսնվողների %-ի)⁵



Գծապատկեր 3
Հիմնական պարենային ապրանքների միջին մանրածախ գները ՀՀ-ում 2008-2013 թթ. II եռամսյակ⁶

Փաստորեն, 2012թ.-ին նախորդ տարվա համեմատ, հանրապետությունում դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 10-ում գրանցվել է 0.6-11.4% գնաճ: Մասնավորապես, շաքարավազի գինն աճել է 10.0%-ով, մսամթերքինը՝ 7%-ով, հացամթերքինը՝ 3.9%-ով (նախորդ տարվա 11% գնաճի դիմաց), կենդանական ու բուսական յուղինը և ձկնամթերքինը՝ 3.1%, կաթնամթերքինը՝ 0.6%: Ընդ որում, հացամթերքի գնաճի պայմաններում (դիտարկվող ժամանակաշրջանում) հանրապետություն մերմուծված ցորենի գինը 2011թ. նույն ժամանակաշրջանի

⁵ Տե՛ս World Hunger Education Service. 2013 World Hunger and Poverty Facts and Statistics. World Bank PovcalNet "Replicate the World Bank's Regional Aggregation, 2013.
⁶ Կազմվել է Պարենային ապահովություն և աղքատություն, 2013թ. հունվար-հունիս տվյալների հիման վրա:

նկատմամբ աճել է 17.7%-ով և կազմել 110.9 դրամ 1կգ-ի համար: Գնանկում դիտվել է միրգ, բանջարեղեն և կարտոֆիլ, ինչպես նաև ձու ապրանքախմբերում, համապատասխանաբար՝ 20.3%, 6.2% և 0.8%:

Ելնելով գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից, 2012թ.-ին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի ու անտառային տնտեսության զարգացմանը:

Անտառային տնտեսության երկրորդ զլխում՝ «ՀՀ պարենային անվտանգության իրավիճակի գնահատումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում», վերլուծվել են գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և սպառման հիմնահարցերը, քննարկվել է պարենային անվտանգության որպես ազգային անվտանգության միջոցի դերակատարությունը, ուսումնասիրվել են ագրարային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները:

Ագրոպարենային համակարգը հանրապետության ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և պարենային անվտանգության ապահովման գործում վճռորոշ դեր ունի: 2012թ. գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում մինչև զանազան 2008թ.-ի 16.3%-ից աճել է և 2012թ.-ին կազմել է 19%: Գյուղատնտեսությունը շարունակում է ծառայել իբրև եկամտի հիմնական աղբյուր գյուղական աղքատ խավի համար:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսության հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածություններ, բերքատվություն և համախառն բերք⁷

	Տարածություններ (հազ.հա) Areas (thousand hectare)					Բերքատվություն (ց/հա)** Yield (centner/hectare)**					Դամախառն բերքը (հազ. տոննա) Gross production (thousand tons)				
	2008	2009	2010	2011	2012	2008	2009	2010	2011	2012	2008	2009	2010	2011	2012
Ցամաքային տարածությունը, ընդամենը Sown area, total	304.5	300.0	283.6	286.7	304.2	X	X	X	X	X	X	X	X	X	X
որից of which															
Հացատնկային և հատիկաբերեղենային մշակաբույսեր Cereals and leguminous crops	172.8	171.6	159.3	157.8	172.2	24.1	22.6	20.7	27.9	26.5	415.4	374.9	326.4	440.7	456.1
որից՝ ցորեն Of which wheat	93.1	91.9	87.6	77.8	93.7	24.3	22.4	21.2	28.6	26.0	225.7	198.1	183.5	224.1	243.1
Կարտոֆիլ potatoes	34.3	32.0	28.4	26.7	31.2	188.7	184.4	170.1	194.3	206.7	648.6	593.6	482.0	557.3	647.2
Բանջարանոցային vegetables	24.2	23.9	23.5	25.0	25.2	321.4	327.1	294.2	306.7	325.0	825.3	819.8	707.6	787.1	849.0
Բոլորտնային մշակաբույսեր melons	5.4	6.2	4.5	5.8	5.1	334.5	350.6	296.0	313.8	399.9	182.2	216.1	132.5	180.9	205.1
Պտուղ և հատապտուղ Fruit and berries	36.7	37.0	37.7	37.1	39.3	101.2	104.4	99.2	73.5	97.0	317.8	332.2	126.5	239.4	331.7
հատիկ Grape	16.8	16.5	17.4	16.3	17.4	128.0	144.9	151.5	158.0	151.3	185.8	208.6	222.9	229.6	241.4

⁷ Տե՛ս Պարենային ապահովություն և աղքատություն, 2012թ. հունվար-դեկտեմբեր: ԱՎԾ 2013թ.:

Շուկայական հարաբերությունների անցման ժամանակահատվածում տեղական արտադրության առաջին անհրաժեշտության գյուղատնտեսական մթերքներով երկրի բնակչությանն ապահովելու, արտադրանքի իրացման, ճանապարհների շրջափակման ու այլ խնդիրների հետ կապված զգալի փոփոխություններ կրեցին ինչպես գյուղատնտեսության ճյուղային, այնպես էլ բուսաբուծության ու անասնաբուծության ներծյուղային կառուցվածքները: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը 2012թ. հետևյալն էր. բուսաբուծություն՝ 62.3%, անասնապահություն՝ 37.7%, 1990թ. համապատասխանաբար՝ 49.4% և 50.6%-ի դիմաց⁸: 2012 թվականին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 507.8 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 12.8%-ով:

Վերջին տարիներին նկատվում էր գյուղատնտեսական կենդանիների զլխաքանակի նվազման միտում, սակայն սկսած 2011 թվականից գյուղատնտեսական կենդանիների զլխաքանակն ավելացել է: 2012 թվականի սկզբին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, խոշոր եղջերավոր կենդանիների զլխաքանակն ավելացել է 27.9 հազ. զլխով, այդ թվում՝ կովերինը՝ 10.8 հազ., մանր եղջերավորներին՝ 57.7 հազ. զլխով: Նշված ժամանակահատվածում 561 հազ. զլխով ավելացել է նաև թռչունների զլխաքանակը⁹: Անասնազլխաքանակի աճը կարևոր նախադրյալ է հանդիսացել 2012 թվականին անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2012 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 280.1 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 3.2 %-ով¹⁰:

Աղյուսակ 2

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները

	2011թ. փաստացի	2012թ. օպերատիվ	2012թ.-ը 2011թ. նկատմամբ, %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	127.9	133.5	104.4
Կաթ հազ. տոննա	601.5	629.0	104.6
Զու. մլն. հատ	633.6	648.5	102.4

⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012թ.: ԱՎԾ 2013թ.

⁹ Տե՛ս ՀՀ Կառավարության 2012թ. Գործունեության միջազատումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն: ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 2012թ. Գործունեության հիմնական նույնությունները և արդյունքները:

¹⁰ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012թ.: ԱՎԾ 2012թ.

ՀՀ պարենային ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև արտադրված գյուղատնտեսական արտադրանքի սպառումը: Այդ նպատակով ներկայացնենք ՀՀ մարզերում գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակը 2011-2012թթ. կտրվածքով: Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումար:

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակը 2011-2012թթ., մարզերի կտրվածքով (տոկոսներով)¹¹

Մարզերի անվանումը	Պարենային և հատիկա-բերրի		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Պարենային բրուսան		Պտուղ և հատապտուղ		Խաղող		Միս		Կաթ		Զու		Բուրդ		Սնդր	
	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012
Ա	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
Կատարյալ համապատասխանում չկանոնը	32.7	33.0	40.5	40.8	77.4	78.0	95.2	95.2	52.1	65.9	85.1	85.6	79.8	83.7	51.4	51.1	39.7	45.5	42.0	49.1	62.6	52.7
Արագածոտն	25.1	28.6	20.5	21.3	79.6	69.7	-	50.0	38.4	80.2	95.1	92.5	90.9	97.1	63.1	63.9	70.7	73.0	34.3	53.2	86.0	81.8
Արարատ	32.9	32.4	76.1	79.7	86.2	85.6	81.2	89.2	80.9	82.5	83.8	85.1	87.8	83.9	54.0	58.6	40.0	46.3	56.7	58.9	58.3	44.2
Արմավիր	35.2	39.7	90.7	86.4	92.1	90.4	96.5	96.2	67.2	94.2	92.7	88.6	86.9	84.6	72.1	69.4	29.3	41.0	62.1	88.9	45.5	72.9
Գեղարքունիք	49.7	47.7	50.0	47.4	30.9	41.2	-	-	25.1	17.8	-	-	58.3	76.5	43.3	43.5	29.9	58.1	77.8	44.5	45.3	49.1
Լոռի	10.8	17.0	14.6	15.9	27.5	46.3	-	-	12.8	16.7	37.0	37.7	74.5	72.3	52.9	54.2	26.0	23.0	14.8	13.0	47.6	41.8
Կոտայք	41.1	35.5	56.9	48.1	42.7	31.7	-	-	67.1	58.3	-	-	89.8	89.4	70.0	67.9	80.7	79.1	89.7	84.5	84.6	84.0
Շիրակ	30.6	29.2	24.8	29.4	53.4	70.4	-	-	39.2	36.4	-	-	80.9	82.1	48.2	46.3	31.5	32.9	35.3	32.1	51.6	51.6
Սյունիք	32.3	34.0	34.4	41.6	54.4	46.9	-	-	53.1	49.8	10.4	23.7	82.1	79.1	51.6	52.5	40.7	40.0	54.9	47.9	60.2	59.6
Վայոց ձոր	15.5	17.9	13.8	14.3	15.3	13.7	60.0	-	40.2	36.4	73.6	90.4	78.7	77.1	28.9	28.9	22.8	18.6	91.4	66.1	59.2	56.6
Տավուշ	13.7	13.4	4.0	5.2	17.2	14.2	-	-	12.7	10.0	58.1	66.4	76.8	79.1	32.7	36.4	20.9	19.1	12.8	34.1	53.9	42.4

Սննդամթերքի արտադրությունը միայն բավարար չէ անհատի պարենային անվտանգությունը ապահովելու համար: Պարենային անվտանգության երկրորդ կարևորագույն հատկանիշը համապատասխան կալորիականությանը սննդամթերքի երաշխավորված մատչելիությունն է, որի համար ատենախոսը դիտարկել է սննդամթերքի տնտեսական մատչելիությունը՝ հենվելով աղքատության գծի գնահատականի վրա:

¹¹ Տե՛ս, Գյուղատնտեսական մթերքի իրացումը /օգտագործումը/ գյուղացիական տնտեսությունների կողմից 2012թ.: Վիճակագրական տեղեկագիր 2013թ. ԱՎԾ:

Պարենի մատչելիությունը, որը բնութագրվում է բնակչության կողմից փաստացի սպառված պարենամթերքի մակարդակով, էապես կախված է առկա ռեսուրսներից, այդ թվում տնային տնտեսությունների դրամական եկամուտներից, որը հանդիսանում է բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշը:

Աղյուսակ 4

Անվանական դրամական եկամուտները տնային տնտեսության մեկ շնչի հաշվով (միջին ամսեկան)¹²

	Ընդամենը հանրապետությունում			այդ թվում			գյուղական բնակավայր		
				քաղաքային բնակավայր					
	2010	2011	2012	2010	2011	2012	2010	2011	2012
Ընդամենը դրամական եկամուտներ	31553	34206	39056	35682	38451	42745	24124	26384	32406

Ինչպես տեսնում ենք աղյուսակի տվյալներից, 2012թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է բնակչության դրամական եկամուտների աճի միտում թե քաղաքային և թե գյուղական բնակավայրերում: Այնուամենայնիվ, դրամական եկամուտների աճին զուգընթաց գրեթե չի մեղմացել բևեռացումը: Այսպես, 2012թ. ամենաշատ ապահովված 10% բնակչության դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով 14.6 անգամ գերազանցել են ամենաքիչ ապահովված 10% բնակչության դրամական եկամուտներին (2010թ. 14.2 անգամ):

Պարենի մատչելիությունը բնութագրող հաջորդ խումբ ցուցանիշները տնային տնտեսությունների ծախսերն են՝ ըստ ուղղությունների, ինչպես նաև սպառված սննդամթերքի ծավալն ու կառուցվածքը:

Աղյուսակ 5

Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով (միջին ամսական)¹³ դրամ

	2009	2008	2010	2011	2012
Գնված սննդամթերք	10859	11455	11193	13595	13169
Զգնված սննդամթերք	2897	3080	3200	3155	3451
Հանրային սնունդ	389	449	452	434	439
Ալկոհոլային խմիչք	238	227	272	245	242
Ծխախոտ	1035	1019	1009	1123	1199
Ոչ պարենային ապրանքներ	4294	4730	4426	5011	6159
Ծառայություններ	7955	7918	8095	9022	10262
Հանրապետական միջինը	27667	28878	28647	32585	34921

¹² Կազմվել է պարենային ապահովություն և աղքատություն, 2010, 2011, 2012, 2013 թ տվյալների հիման վրա:

¹³ Կազմվել է պարենային ապահովություն և աղքատություն, 2010, 2011, 2012, 2013 թ տվյալների հիման վրա:

2012թ. նախորդ տարվա համեմատ ամսական միջին անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ավելացել են 7.2%-ով: Ծախսերի մեջ ավելացել են ոչ պարենային ապրանքների (22.9%-ով), ծառայությունների (13.7%-ով), չգնված սննդամթերքի (9.4%-ով), ծխախոտի (6.8%-ով), հանրային սննդի (1.2%-ով) մասնաբաժինները: Միևնույն ժամանակ արձանագրվել է գնված սննդամթերքի (3.1%-ով) և ալկոհոլային խմիչքների (1.2%-ով) համար ծախսերի նվազում:

Աղյուսակ 6

Անվանական սպառողական ծախսերի մեջ սննդամթերքի վրա կատարված ծախսերի մասնաբաժինը, տոկոսներով¹⁴

	2009	2010	2011	2012
Հանրապետական միջինը	51.1	51.9	52.7	48.9

2012թ.-ին նախորդ տարվա համեմատ 7.9%-ով նվազել են շաքարի, 7.8%-ով կաթի և մածուցի, 3.8%-ով ձվի, 1.7%-ով կարտոֆիլի մեկ շնչի հաշվով ամսական սպառումը: Դրա հետ մեկտեղ, 14.3%-ով աճել է ձուկ, ձկնեղենի, 12.5%-ով բուսական յուղի, 9.0%-ով միս և մսամթերքի, 6.3%-ով կարագի, 4.9%-ով պանրի բոլոր տեսակների, 4.0%-ով մրգի և հատապտղի, 1.7%-ով բանջարեղենի ամսական սպառումը: Հացի և հացամթերքի ամսական սպառումը մնացել է անփոփոխ:

Դիտարկելով պարենային ապրանքների արտադրության և պահուստի հիմնահարցերը, մասնավորապես սպառված սննդամթերքի էներգետիկ արժեքը մեկ շնչի հաշվով, հիմնական գյուղատնտեսական մթերքների հաշվով, ինչպես նաև վերլուծելով ՀՀ պարենային հաշվեկշիռը, ատենախոսը եզրակացնում է, որ ՀՀ բնակչությունը պարենային ապահովման տեսանկյունից համարվում է խոցելի:

Ատենախոսը նշում է նաև, որ ՀՀ-ն ունենալով պարենային ինքնաբավության ոչ բավարար մակարդակ, որի բարձրացման համար կարևորվում են տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ապահովումը, ագրարային հատվածի առավել հաջողակ ճյուղերին խրախուսումը, պառջին անհրաժեշտության ապրանքների ինքնաբավության մակարդակի էական բարձրացումը, գյուղական համայնքների զարգացումն ու աղքատության կրճատումը՝ միևնույն ժամանակ լուծելով «գյուղացիական տնտեսությունների խոշորացում, գյուղացիական տնտեսությունների պետական աջակցության հասցեականություն, կոոպերացիայի խորացում, անկախ սեփականության ձեւից հողերի ոչ նպատակային օգտագործման կանխում օրենսդրորեն, պարենային ապահովության բարելավում» խնդիրները: Այս առումով ատենախոսը ձևակերպել է պարենային անվտանգության ապահովման ռազմավարական հետևյալ տեսանկյունները.

¹⁴ Կազմվել է պարենային ապահովություն և աղքատություն, 2010, 2011, 2012, 2013 թ տվյալների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման ռազմավարական տեսանկյունները

- Սննդամթերքի տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացում,
- Գյուղատնտեսությունում արտադրողականության և մրցունակության բարձրացում, սննդամթերքի ֆիզիկական մատչելիության ապահովման և գնաճի զսպման համար նախադրյալների ստեղծում,
- Սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացում, սանիտարիայի և բուսասանիտարիայի վիճակի բարելավում,
- Պարենային անկախության մակարդակի բարձրացում,
- Գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավում,
- Տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ խմելու և ոռոգման ջրի մատակարարման բարելավում ու կառավարման կատարելագործում,
- Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի մելիորատիվ վիճակի բարելավում,
- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում,
- Բնակչության պարենային անվտանգության բնագավառում սնուցման լիարժեքության ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացում,
- Կենսապաշարների ապօրինի օգտագործման բացառում, էկոհամակարգերի վրա բացասական ներգործության մեղմացում,
- Սևանա լճի պարենային նշանակություն ունեցող ձկների արդյունագործական պաշարների վրա բացասական ներգործության կանխում (մեղմում),
- Բնական ռեսուրսների (հողային, ջրային) կառավարման արդյունավետության բարձրացում,
- Արտակարգ իրավիճակներում հնարավոր պարենային ճգնաժամերի առաջացման կանխարգելում,
- Պարենային ճգնաժամի դեպքում շուկայի կարգավորում,
- Պետական պարենային պահուստներում առաջնահերթ կերպով կուտակվող, ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող սննդամթերքի կուտակման չափերի սահմանում,
- Ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակների պայմաններում հնարավոր պարենային ճգնաժամերի կանխարգելման նպատակով պետական պահուստում կուտակվող սննդամթերքի անվանացանկի, կուտակման չափերի և ժամկետների հստակ և իրատեսական (օպտիմալ) սահմանում:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «ՀՀ պարենային անվտանգության քաղաքականության առաջնահերթությունների գնահատում», ուսումնասիրվել են ՀՀ ագրարային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները, քննարկվել են պարենային պակասուրդի կանխման ռազմավարական տեսանկյունները, քննարկվել են ճգնաժամային իրավիճակներում պարենային ապահովվածության հիմնախնդիրները:

Ագրարային քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի ավելացմանը, գյուղացիական տնտեսությունների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալների ավելացմանը, ցանքատարածությունների կառուցվածքի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների կարևորագույն տեսակների գծով երկրի ներքին պահանջարկի բավարարմանը, ներքին և արտաքին շուկաներում գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը, գյուղատնտեսության մեջ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանը, գիտատեխնիկական նվաճումների և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլն¹⁵։ Ագրարային քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, բարձրացնել պարենային ապահովվածության մակարդակը և ավելացնել գյուղական բնակչության եկամուտները։ Ելնելով գյուղատնտեսության ներկա իրավիճակից, առեմախոսնը հատկապես կարևորվում է գյուղարտադրողներին խորհրդատվության մատուցման դերը մասնագիտական, մարքեթինգային, նոր տեխնոլոգիաների ներդրման, ագրոտեխնիկայի, զոոտեխնիկական պահանջների կատարման, տնտեսվարման, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ու մեթոդների արմատավորման գործում։ Հաշվի առնելով ագրարային ոլորտի դերն ու նշանակությունը երկրի պարենային ապահովման գործում, ատենախոսը կարևորվում է նաև ագրոպարենային համակարգի զարգացման հետևյալ գերակայությունները.

1. Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում և արտադրության եկամտաբերության բարձրացում։
2. Գյուղատնտեսությունում առկա արտադրական ներուժի՝ հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործում։
3. Սննդամթերքի անվտանգության հիմնախնդիրների լուծում։
4. Գյուղական աղքատության հաղթահարում և բնակչության արտահոսքի մեղմացում, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնում։
5. Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում, բարձր ավելացված արժեք ապահովող արտադրանքների արտադրության տեսակարար կշռի մեծացում։
6. Շրջակա միջավայրի վրա գյուղատնտեսության բացասական ազդեցության նվազեցում։
7. Գյուղատնտեսության հարկային և վարկային համակարգի բարելավում։
8. Գյուղատնտեսության միջազգայնացման գործընթացների զարգացում։

¹⁵ Տե՛ս Նազարենկո Վ. Ագրարային քաղաքականությունը Եվրոպական Միության մարկետ ԴՍ, 2004թ, էջ 45։

Երկրում պարենային ընդհանուր վիճակը վերլուծելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ պարենային պակասուրդի հիմնական ձևերի բնույթի և մասշտաբների վերաբերյալ։

Սակրոմակարդակում պարենային պակասուրդի կառուցվածքի և մասշտաբի բազմակողմանի վերլուծության մոդելը հնարավորություն է տալիս պարենային անվտանգության բարձրացման ժամանակ որոշել միջամտության առաջնահերթ ուղղվածությունը։ Պարենային պակասուրդի տարբեր ձևերի քննարկումը կանխորոշում է կոնկրետ երկրում պարենային անվտանգության բարելավման ռազմավարությունները։ Այս ռազմավարությունների մեջ կարևոր նշանակություն ունի պարենի հավասարաչափ մատակարարման լոգիստիկան։ Լոգիստիկ մոտեցումը ենթադրում է համակարգայնություն, ամբողջականություն, գումարային ծախսերի օպտիմալացում, նախագծերի մշակման և իրականացման միասնականություն։

Պետության պարենամթերքի պաշարները երկրի պետական պաշարների բաղկացուցիչն են և նախատեսված են պարենային ճգնաժամի կանխման կամ դրա հետևանքների վերացման համար։

Գնումների գործընթացի կազմակերպումը, որը սերտ կապված է հավասարաչափ մատակարարման լոգիստիկայի հետ, ունի հետևյալ փուլերը. ռեսուրսների շուկայի և գործող պայմանների, առաքման, պահպանման մասին տեղեկատվության հավաքում և մշակում, նյութատեխնիկական հագեցվածության աղբյուրների ու ձևերի ընտրություն, պատվերների տեղաբաշխում և դրանց իրականացում, նախագծերի կազմակերպում՝ հաշվի առնելով ռեսուրսները և նյութական արժեքների ձեռքբերման հաշիվները, մատակարարների հետ հարաբերությունների պահպանում։

Մատակարարների ընտրության համար կիրառվում է ստանդարտ սխեմա՝ բաղկացած 4 փուլերից¹⁶ .

- պոտենցիալ մատակարարների որոնում,
- մատակարարների վարկանիշի ստուգում,
- հնարավոր մատակարարների վերջնագծի վերլուծություն,
- մատակարարի հուսալիության գնահատում։

Ատենախոսի կարծիքով, պետության պարենային անվտանգության ապահովման համար կարևոր նշանակություն է ձեռք բերում պարենային ռազմավարական պահուստների ճիշտ գնահատումն ու ձևավորումը։ Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել ագրոպարենային համակարգի զարգացումը գիտության նորագույն նվաճումների ներդրման շնորհիվ և երաշխավորված պահուստների ստեղծման նպատակով ագրարային ոլորտի հետագա զարգացման ճշգրիտ կանխատեսումների հիման վրա։ Այդ նպատակով, գյուղատնտեսական սպառողա-

¹⁶ Տե՛ս Բարկալով Ս.Վ., Բուրկով Վ.Ն., Կուրոչկա Ս.Ն., Օբրազցով Ս.Ն. Զաдачи управления материально-техническим снабжением в рыночной экономике М.: ИПУ РАН, 2000, էջ 45։

կան կոոպերատիվների բազայի հիման վրա, պետք է ստեղծել և զարգացնել լոգիստիկ կենտրոն: Այդ ճանապարհով կստեղծվի ապրանքն ուղեկցող ենթակառուցվածք և կընդլայնվեն գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի սպառման շուկաները: Միևնույն ժամանակ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի սպառումը կկենտրոնանա գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների ձեռքերում՝ բացառելով բազմաթիվ միջնորդների առկայությունը գյուղատնտեսական ապրանք արտադրողների և սպառողների միջև:

Ատենախոսը կարևորում է, որ որոշումների ընդունման գործընթացում հետզհետե աճում է լոգիստիկայի և վերահսկողության (կոնտրոլինգի) դերը, որը, ինչպես միջազգային փորձը ցույց է տալիս, ապահովում է ագրարային ոլորտի մրցունակության աճ: Գյուղատնտեսության ոլորտում լոգիստիկայի ներդրումը թույլ կտա իրականացնել երկրի տնտեսության պարենային ապահովման պլանավորում, վերահսկողություն և կառավարում:

Ատենախոսության «Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և եզրահանգումներն, որոնք ներկայացված են հետևյալ դրույթներով.

1. Պարենային անվտանգության ապահովման համատեքստում ագրոպարենային համակարգի հիմնական նպատակն է առկա բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման, ագրարային բարեփոխումների իրականացման, տնտեսվարման ձևերի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և գյուղատնտեսության ոլորտում ենթակառուցվածքների գործունեության կատարելագործման արդյունքում ստեղծել ամիրաժեշտ նախադրյալներ Հայաստանի Հանրապետության բնակչության կայուն պարենապահովման բարելավման համար:

2. ՀՀ-ում առկա է նաև պարենի անհավասարաչափ բաշխման հիմնախնդիր: Մասնավորապես, պարենային անապահովվածության մակարդակը բարձր է լեռնային շրջաններում, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ խնդիրներով՝ գյուղատնտեսության համար անբարենպաստ բնակլիմայական պայմաններ, մասնավորապես՝ ոռոգելի հողերի բացակայություն կամ դրանց ցածր տեսակարար կշիռ, գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների հեռավորություն, այլ աշխատանքներով զբաղվելու հնարավորությունների պակաս: Նշված խնդիրներն առանձնահատուկ են գրեթե բոլոր բարձրադիր (լեռնային) բնակավայրերի համար:

3. Գյուղական տարածքների համաչափ զարգացմամբ պայմանավորված է նաև ագրոպարենային համակարգի կայուն զարգացումը և՛ հակառակը: Ներկայումս առկա հողային, ջրային, աշխատանքային, արտադրական և նյութատեխնիկական ռեսուրսների ներուժը գյուղական տարածքներում բավարար չափով չի օգտագործվում, սակայն տեսանելի հեռանկարում գյուղական բնակչության գերակշռող մասի կենսամակարդակի բարձրացման հիմնական աղբյուր են հանդիսանալու գյուղատնտեսական արտադրությունից ստացված եկամուտները:

Հետևաբար, գյուղատնտեսության և գյուղական տարածքների համաչափ զարգացումը առաջիկայում նույնպես հանդիսանալու է երկրի տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկը:

4. Պարենային ճգնաժամների հետ կապված իրավիճակի վերլուծությունը ցույց տվեց, որ եթե նախկինում երկրի պարենային ապահովման խնդիրը առավելապես քննարկվում էր գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության շրջանակներում, ապա ներկայումս պարենային անվտանգության և պարենի արդյունավետ տեղաբաշխման հիմնախնդրի լուծումը պայմանավորված է ամբողջությամբ վերցրած երկրի սոցիալ-տնտեսական զարգացումով: Հետևաբար, ինչպես սովոր, թերսնումը, այնպես էլ սովամահությունը ոչ միայն պարենամթերքի արտադրության և գյուղատնտեսության, այլև ամբողջ տնտեսության գործունեության հետևանք են:

Ատենախոսի կարծիքով, հետևյալ առաջարկությունները կնպաստեն նշված խնդիրների լուծմանը.

1. Ամիրաժեշտ է կրճատել հետբերքահավաքային կորուստների և պարենային թափոնների մեծ ծավալները՝ ներդրումներ ներգրավելով գյուղական ենթակառուցվածքների՝ մասնավորապես, հաղորդակցության ուղիների, տրանսպորտի, պահպանման, թափոնների ուտիլիզացման, էներգոարդյունավետության բարձրացման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ,

2. աղքատ և սոցիալապես խոցելի բնակչության սննդամթերքի մատչելիության ապահովման նպատակով ամիրաժեշտ է սոցիալական պաշտպանության և սոցիալական երաշխիքների նպատակաուղղված ծրագրերի կիրառում,

3. արտահանման ուղղվածություն ունեցող և արտաքին շուկայում մրցունակ արտադրանք արտադրող կազմակերպություններին վարկային երաշխիքների, դրամաշնորհների և տեխնիկական օժանդակության տրամադրում, մասնավորապես, պտուղ-բանջարեղենի վերամշակման, զինեգործական, օրգանական գյուղատնտեսական մթերքների և այլ ծրագրերի իրականացման համար,

4. ագրարային ոլորտի ռազմավարության խնդիրներին համապատասխանող ծրագրերի իրականացում, որոնք նպաստելու են գյուղատնտեսության կենսունակության և արտադրողների մրցունակության բարձրացմանը,

5. ագրարային ոլորտում տնտեսվարման բազմաձևության և միջճյուղային կոոպերացիայի զարգացման խթանում, մասնավորապես՝ ագրովերամշակող և գյուղատնտեսական հումք արտադրող կազմակերպությունների միջև ֆյուչեր-սային պայմանագրերի համակարգի ընդլայնում և աջակցության տարբեր ձևերի կիրառմամբ համագործակցության զարգացում,

6. ներմուծվող պարենամթերքների աստիճանաբար տեղական արտադրությամբ փոխարինման խթանում, հատկապես՝ ցորենի, շաքարի, բուսական ու կենդանական յուղի, մսի և ձկան տարբեր տեսակների ինքնաբավության բարձրացում,

7. պետություն-մասնավոր հատվածի համագործակցության զարգացմանը գյուղատնտեսության սպասարկման ծառայությունների մատչելիության բարձրացում և որակի բարելավում,

8. գյուղատնտեսական ապահովագրության համաֆինանսավորման մեխանիզմների ներդրում,

9. գյուղատնտեսությունում տնտեսավարողների նպատակային և հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների մշակում և ներդրում՝ ուղղված հողային ռեսուրսների օգտագործման մակարդակի բարձրացմանը, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության բարձրացմանը, գյուղական տարածքների համաչափ զարգացմանը և այլն.

10. գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ընդլայնում, ինչպես օրինակ փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը և աջակցությունն ագրոտուրիզմին, արհեստագործությանը և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.

1. Ճաղարյան Է. «Պետության տնտեսական անվտանգության կառավարման ու ռազմավարական պլանավորման գնահատման և ուսումնասիրման մեթոդները»: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու 2(14), Երևան 2012, էջ 96-101:

2. Ճաղարյան Է. «Անվտանգություն» հասկացությունը, դրա հիմնական դրույթները, զարգացման պատմաիրավական նախադրյալները, կազմն ու կառուցվածքը: Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա N 9(135), Երևան 2011, էջ 8-9:

3. Ճաղարյան Է. «Գնային քաղաքականությունը և ֆինանսական ապահովվածությունը»: Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա N 9(135), Երևան 2011, էջ 10-11:

ՇԱԳԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ ԱՏՈՏՈՎԻՇ

Современные проблемы продовольственной безопасности РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальностям 08.00.02- “Экономика, управление хозяйством и его отраслями”

Защита диссертации состоится 26-го декабря 2013г., в 15³⁰, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено проблемам продовольственного обеспечения РА. Продовольственная безопасность – одна из важнейших составляющих национальной безопасности страны. Это такое состояние государства, которое, в основном за счет собственного производства, для здоровой и активной жизнедеятельности населения позволяет обеспечить физическую и экономическую доступность пищевых продуктов в таком количестве и ассортименте, которые установлены в соответствии физиологическим нормам. Построение принципиально нового организационно-экономического механизма функционирования продовольственного комплекса вопрос не простой, требует анализа тенденций, выявления причин, организационно-экономического конструирования вариантов моделей, их научной экспертизы.

В работе исследованы сущность продовольственной безопасности, особенности продовольственного обеспечения РА, роль аграрной политики и логистического обеспечения в системе продовольственного обеспечения Армении.

Предметом исследования являются проблемы продовольственного обеспечения РА и пути их преодоления. Объект исследования-система продовольственного обеспечения Армении.

Цель исследования-разработать предложения для обеспечения продовольственной безопасности РА, оценки структуры и масштабов общего продовольственного дефицита, непрерывного снабжения продовольствием в условиях кризиса. Для достижения поставленной цели были выдвинуты следующие задачи:

- изучить особенности продовольственного обеспечения РА,
- оценить состояние продовольственного обеспечения РА в контексте национальной безопасности,

- изучить стратегические аспекты продовольственного обеспечения РА,
- изучить приоритеты аграрной политики РА, разработать направления усовершенствования аграрной политики,
- проанализировать продовольственный баланс РА для оценки структуры и масштабов продовольственного дефицита,
- выявить проблемы продовольственного обеспечения в условиях кризиса и выработать меры их преодоления.

Основные результаты и новизна исследования заключаются в следующем:

Научное новшество диссертации обусловлено рядом теоретических и практических результатов полученными в процессе исследований, следующие из которых имеют особое значение и являются предметом защиты:

- Обоснована необходимость создания информационных систем сельского хозяйства с целью обеспечения информационных обоснований для проведения мониторинга продовольственных програм, в частности: внедрение системы административного регистра сельского хозяйства, создание репозитарий в аграрной сфере, резюме и анализ данных,
- Было предложено создать денежные фонды продовольственной безопасности, средства полученные от рационального использования этих фондов могут быть направлены на реализацию краткосрочных продовольственных програм, а также продовольственное пополнение, для рационального пользования которого предлагается развитие сотрудничества между государством и частным сектором,
- С целью повышения эффективности регионального сотрудничества в области продовольственной безопасности были разработаны основные положения «Программа быстрого продовольственного реагирования» в рамках организации договора коллективной безопасности,
- Для обеспечения адресованности продовольственной политики было предложено внедрить/использовать модифицированный индекс оценки бедности сообщества, который считается на основе показателей возможности обеспечения доходов в сообществе, уязвимости сообщества и ограниченности создания условий для обеспеченной жизни,
- Предлагается концепция обеспечивающая последовательность вмешательства в случае продовольственного кризиса, следующие составляющие входят в концепцию: предупреждение продовольственного кризиса, рациональное использование продовольственных резервов, продовольственной помощи и фондов продовольственной безопасности.

TSHAGHARYAN EDGAR ASHOT

Modern Problems of Food Security in Armenia

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02- “Economics, Management of the Economy and its Branches”.

The defense of the thesis will take place on December 26 , 2013, at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics, to: 128 M. Nalbandyan str., Yerevan, RA, 0025.

ABSTRACT

The thesis is devoted to the problems of food security of Armenia. Food security is one of the most important components of national security. The concept of food security is defined as including both physical and economic access to food that meets people's dietary needs as well as their food preferences. The construction of a fundamentally new organizational and economic mechanism of the food complex is not simple issue, requires an analysis of trends, identifying the causes, designing new organizational and economic models, as well as their scientific expertise.

The essence of food supply security of the RA, its peculiarities, the role of agricultural policy and logistics supply in the system of food supply of Armenia are presented in the research.

The objective of the research is to present the problems of food supply of the RA and the options of their solution. The subject of the research is the food supply of Armenia.

The purpose of the study is to develop proposals to ensure food security of the RA for assessing the structure and scope of the overall food deficit, the continuous supply of food in times of crisis. To achieve this goal the following objectives have been put:

- study the characteristics of the food security of RA,
- assess the state of food security in the context of the RA National Security,
- review the strategic aspects of the food supply RA

- review the priorities of agricultural policy of Armenia, to develop ways of improving agricultural policy,
- analyze the food balance of the RA to assess the structure and extent of the food shortages,
- identify the problem of food security in times of crisis and to develop measures to overcome them.

Main results and novelty of the research are as follows:

The scientific innovation of the thesis is conditioned by a number of theoretical and practical results received in the course of research the following of which have essential meaning and are subject of defense:

- The necessity of creation of agricultural information system for the purpose of ensuring of information basis for implementation of food program monitoring has been justified, particularly: introduction of agricultural administrative register system, creation of repositories related to agriculture, summary and analysis of data,
- It was proposed to create monetary funds of food supply security the means received from rational use of which may be aimed at realization of short term food programs, supplement and replenishment of food for the rational use of which it is suggested to develop the relations between the state and the private sector,
- To improve the effectiveness of regional cooperation in the sphere of food supply security the general provisions of Program of Food quick response in the frames if Collective security treaty organization have been elaborated,
- To ensure the addressing of food policy it was proposed to introduce/apply modified index of community poverty evaluation which is calculated based on indicators of possibility of receiving profit in the community, vulnerability of community and restrictions of possibility of ensuring socially secure life in the community,
- A concept of ensuring the sequence of interference in case of food crisis with the following components was proposed: warning of food crisis, rational use of food reserves, food aid and food supply security funds.



review the questions of agricultural policy of Armenia, to develop ways of improving agricultural policy.

analyze the food balance of the RA to assess the progress and extent of the food shortages.

identify the problems of food security by means of risks and to develop measures to overcome them.

Main results and novelty of the research are as follows:

The scientific justification of the thesis is substantiated by a number of theoretical and practical results achieved in the course of research the following of which have essential meaning and are spheres of influence:

The necessity of creation of agricultural information systems for the purpose of ensuring of information base for implementation of food program monitoring has been justified, particularly introduction of agricultural administrative control system, creation of specialized centers of agriculture, summary and analysis of data.

It was proposed to create secondary basis of food supply security the main received from national use of which may be aimed at realization of short term food programs, application and implementation of food for the national use of which it is suggested to develop the relations between the state and the government.

To improve the effectiveness of regional cooperation in the sphere of food supply security the general provisions of Program of food security in the form of collective security treaty organization have been suggested.

To assess the efficiency of food policy it was proposed to introduce a modified index of community poverty evaluation which is calculated based on indicators of possibility of receiving profit in the community, vulnerability of community and restriction of possibility of ensuring security secure life in the community.

A concept of ensuring the requirements of households, use of food stock with the following components was proposed: winning of food stock, national use of food reserves, special and food supply security topics.

ՀՀ Ազգային գրադարան

NL0614076

